ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 229-Ա

ՆԱԻՐԻ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՋԱՆՎԵԼՅԱՆԻՆ «ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՀՈՎԻՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 22-րդ, 22.1 մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N 259-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգի» 14-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով ՀՀ Տավուշի մարզի Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի թափուր տեղը զբաղեցնելու համար հավակնորդների հետ հարցազրույցներ անցկացնելու նպատակով ձևավորված հանձնաժողովի 2026 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումը, հաշվի առնելով Նաիրի Սերյոժայի Ջանվելյանի 2026 թվականի հոկտեմբերի 12-ի դիմումը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

Նաիրի Սերյոժայի Ջանվելյանին 2026 թվականի հոկտեմբերի 27-ից նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Այգեհովիտի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող՝ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ 5 (հինգ) տարի ժամկետով:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

2026-10-27 17:20:57 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2026թ. հոկտեմբերի 27
ք.Իջևան